



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: [municipalityspitak@gmail.com](mailto:municipalityspitak@gmail.com)

ՈՐՈՇՈՒՄ

«10» հունիսի 2022թ. № 60 - Ա

**«ԱՍՏՂԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ  
ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0027-0007 կադաստրային ծածկագրով 0,60755 հեկտար մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 03102018-06-0085), 06-061-0028-0007 կադաստրային ծածկագրով 0,60661 հեկտար մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 25092018-06-0078), 06-061-0029-0007 կադաստրային ծածկագրով 0,60901 հեկտար մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 25092018-06-0097) բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասերը 2018 թվականից վարձակալության իրավունքով պատկանում են «Աստղիկ» բարեգործական հիմնադրամին, հիմք ընդունելով «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Մարիամ Անտոնյանի 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 01/003-Ե գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Աստղիկ» բարեգործական հիմնադրամին վարձակալության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0027-0007 կադաստրային ծածկագրով 0,60755 հեկտար մակերեսով, 06-061-0028-0007 կադաստրային ծածկագրով 0,60661 հեկտար մակերեսով և 06-061-0029-0007 կադաստրային ծածկագրով 0,60901 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասերը, գնման նախապատվության իրավունքով, «Աստղիկ» բարեգործական հիմնադրամին ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0027-0007 կադաստրային ծածկագրով 0,60755 հեկտար մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 1 քառակուսի մետրը 141,9 ՀՀ դրամ (ընդամենը՝ 862 113,45 ՀՀ դրամ):

